Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 24-ի նիստի N 36
արձանագրային որոշման

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև առևտրային և ներդրումային համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

Հաշվի առնելով ներկայիս բարեկամական հարաբերությունները երկու երկրների միջև,

Ցանկանալով խրախուսել և դյուրացնել առևտուրն ու ներդրումները Հայաստանի և Բրազիլիայի միջև,

Հավատալով, որ առևտրի և ներդրումների խթանումը կնպաստի երկու երկրների զարգացմանը և երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդմանը,

Հիմնվելով իրենց երկրների գերակա ազգային օրենսդրության վրա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Նպատակը

Սույն Փոխըմբռնման հուշագիրը նպատակ ունի ամրապնդել առևտրային և ներդրումային հնարավորությունների խրախուսմանն ուղղված երկկողմ համագործակցությունը Կողմերի միջև:

Հոդված 2
Համագործակցության շրջանակը

Կողմերը անհրաժեշտ ջանքեր կգործադրեն ամրապնդելու համագործակցությունը առևտրի և ներդրումների խթանման ոլորտում, որը մասնավորապես, սակայն ոչ բացառապես ներառում է.

1) երկու երկրներում հստակ գործարար հնարավորությունների ուսումնասիրությունը և խթանումը,
2) անհատների և ձեռնարկությունների մասնակցության դյուրացումը երկու երկրներում կազմակերպվող ցուցահանդեսներին, տոնավաճառներին, գործարար առաքելություններին և միջոցառումներին, ինչպես նաև փոխազդեցության հնարավոր այլ շրջանակներում,

3) առևտրի և ներդրումների խրախուսմանն ուղղված համագործակցությունը երրորդ երկրների շուկաներում ու փոքր և միջին մասնավոր ձեռնարկությունների ակտիվ մասնակցությունը երկկողմ տնտեսական հարաբերություններում:

Հոդված 3
Համատեղ աշխատանքային խումբ

Փոխըմբռնման հուշագրի կատարման նպատակով Կողմերը համաձայնում են ստեղծել առևտրի և ներդրումների բնագավառում համագործակցության հարցերով համատեղ աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային Խումբ):

Հոդված 4
Աշխատանքային Խմբի գործառույթները

Աշխատանքային Խմբի լիազորությունների մեջ է մտնում.

1) ծառայել հիմնական հարթակ՝ քննարկելու համար տնտեսական համագործակցության ընդլայնման և ամրապնդման ուղիները Կողմերի միջև,
2) խրախուսել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, ներառյալ, սակայն ոչ բացառապես այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են էներգետիկան, ենթակառուցվածքները, նորարարությունը և զբոսաշրջությունը, գործարար հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար փոխանակումը,
3) աջակցել տեսակետների փոխանակմանը՝ բարելավելու համար երկկողմ գործարար միջավայրը: Այդպիսի քննարկումները, հնարավորության դեպքում, պետք է ներգրավեն երկու երկրների մասնավոր հատվածից ներկայացուցիչներ:
4) խթանել համագործակցությունը երկու երկրների առևտրի և ներդրումների խրախուսման հարցերով պատասխանատու կառույցների միջև:

Հոդված 5
Հանդիպումների հաճախականությունը

Աշխատանքային Խումբը նիստեր կանցկացնի ըստ անհրաժեշտության, այլընտրանքայնորեն Հայաստանում և Բրազիլիայում՝ նպատակ ունենալով իրականացնել և վերանայել Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները:

1) Յուրաքանչյուր Կողմ կնշանակի ավագ պաշտոնյա՝ համանախագահելու համար Աշխատանքային Խումբը և նշանակելու համար Աշխատանքային Խմբի այլ անդամներին:
2) Կողմերը գրավոր ծանուցմամբ դիվանագիտական ուղիներով կտեղեկացնեն միմյանց Աշխատանքային Խմբի կազմի համալրման մասին:
3) Աշխատանքային Խումբը կարող է հրավիրել այլ համապատասխան պետական գերատեսչությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին՝ մասնակցելու իր հանդիպումներին:

Հոդված 6
Ֆինանսական միջոցներ

Փոխըմբռնման հուշագիրը չի ենթադրում Կողմերի միջև ֆինանսական միջոցների փոխանցման հետ կապված որևէ պարտավորություն կամ Բրազիլիայի ազգային գանձարանի կամ Հայաստանի Հանրապետության բյուջեին առնչվող ցանկացած այլ պարտավորեցնող գործունեություն:

Հոդված 7
Վեճերի կարգավորում

Ցանկացած տարաձայնություններ, որոնք կարող են առաջանալ սույն Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված կլուծվեն Կողմերի միջև բանակցությունների և խորհրդատվությունների միջոցով:

Հոդված 8
Լրացումներ

Ցանկացած լրացում Փոխըմբռնման հուշագրի մեջ կարող է կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նման լրացումները պետք է կատարվեն առանձին արձանագրությունների տեսքով, հանդիսանալով Փոխըմբռնման հուշագրի բաղկացուցիչ մաս, և ուժի մեջ մտնեն Փոխըմբռնման հուշագրի Հոդված 9-ի դրույթների համաձայն:

Հոդված 9
Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Փոխըմբռնման հուշագիրը չի համարվի միջազգային պայմանագիր և ազդեցություն չի ունենա Կողմերի միջազգային իրավունքների ու պարտականությունների վրա:
2. Փոխըմբռնման հուշագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման պահից:
3. Սույն Փոխըմբռնման հուշագիրը հիմք կծառայի Հայաստանի Հանրապետության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության միջև ներդրումային համագործակցության և դյուրացման համաձայնագրի համար և կստորագրվի Կողմերի կողմից:
4. Սույն Փոխըմբռնման հուշագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Ցանկացած Կողմ կարող է առնվազն իննսուն (90) օր առաջ գրավոր ծանուցմամբ դիվանագիտական ուղիներով տեղեկացնել մյուս Կողմին Փոխըմբռնման հուշագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:
5. Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողության դադարեցումը չի ազդի հուշագրի շրջանակներում իրականացվող ընթացիկ ծրագրերի և ձեռնարկած գործողությունների վավերացման և ընթացքի վրա մինչև դրանց ավարտը:
6. Կատարված է _____ քաղաքում, 201_ թվականի _____-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պորտուգալերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ ծագած տարակարծությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ